

հանձարոյն ու համբաւոյն կնիքը կը դնէր :

Այս երեւելի կինս լաւ ճանչնալու համար պէտք էր իր դահլձին մէջ տեսնալ զինքը, որ իմանի ափունքին դիմաց Օւիցերիի զուարճալի ծառատունկի մը քովն էր . հոն ինքը ճարտասանութեան թագուհի մըն էր, կ'ըսէ մատենագիր մը, հոն կը տեսնուէր իր հանձարը, իր արագամիտ ու շնորհալից խօսակցութիւնը, իր սուր և խորին մտածութիւնները՝ որոնց շատը ոչ միայն իր հանձարը կը ցուցնէն այլ և իր մատենագրութեան ոճը : “ () ր մը կամ տասը տարի բաւական է, կ'ըսէր, զմարդիկ ճանչնալու համար, մնացածները խաբող են ” : Այսով կ'իմացնէր թէ որչափ իրեն ատելի էին չափազանցութիւնն ու արուեստականութիւնը : Աւելի տած ըլլալով որ զգացման նշանները երբ չափէն կ'անցնին՝ կասկածաւոր են ու սուտ, կ'ըսէր . “ Ինութեան ամէն զգացմունքները իրենց ամօթխածութիւնն ունին ” : Այսպիսի հանձարալից իմաստներով ու առածներով լեցուն էր իր խօսակցութիւնը :

Աղաւթի իր դարուն վրայի ըրած ազդմունքը թէ քաղաքականութեան և թէ մատենագրութեան կողմանէ՝ խոր է և անջընջելի : Ի վերայ այսր ամենայնի իր բռնած կերպը բոլորովին ազատ չէ մեղադրութենէ, և ոչ իր ամէն կարծիքները ընդունելի, և ոչ իր ամէն գրուածքները անսխալ ու ճշմարտասէր : Ինչդանի, աշխոյժ, զգայուն ու բռնկող ըլլալով՝ ի բնէ, վաւրճուն ու բանաստեղծական հանձարոյ ամէն աղէկութիւններն ալ պակասութիւններն ալ իր վրան երեցուց :

Մատենագրական գրուածքներուն մէջ ինչուան նաև խոտորմունքներու մէջ ալ ինկած է : Իր դատաստաններուն մեծ մասը թէ՛ ի գովեստ ըլլայ և թէ՛ ի պարսաւ՝ գրեթէ միշտ կըքով մը զուրցուած են, ու կողմնասիրութեան կոյր ոգով մը : Այսպէս, օրինակի համար, Աւիլընկընի համար կ'ըսէր պանծացուցանելով թէ աշխարհքիս մեծա-

գոյն զօրավարն է . և ասիկայ այն դարուն մէջ՝ ուր էր Վաթուէոն մը . կ'ուզեմ ըսել՝ հսկայ մը որուն դիմաց միջակ հասակներն իսկ մէյմէկ գաճաճներ կ'երևային : Այսպէս ևս իր վերջին պատմական գրուածքին մէջ իր հօրը վրայ այնպիսի գովեստներ ու արդիւնքներ կուտայ՝ որոնց չափազանցութիւնը միայն որդիական սիրոյն չափազանցութեամբը կրնայ արդարանալ : Իայց աս ամէն բաներովս ալ հանդերձ, Աղաւթի կենացը մէջ երեւելի ու նշանաւոր անցքեր կան, և իր գրուածոցը մէջ ալ տկար մտածութեանցը, յանդուգն նորաբանութեանցը և չափազանց բացատրութեանցը հետ վայելուչ ոճով և վսեմ ճարտասանութեամբ լեցուն գեղեցիկ էջեր, աղուոր հատուածներ ալ կը փայլին, որոնք զինքը ապագայից դիմաց երեւելի հանձարներէն մէկը սեպել պիտի տան, և մատենագիր մը՝ որ իր հայրենեաց փառքը կ'աւելցնէ :

ՀՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Պատմութիւն Տնօրինականացն Քրիստոսի :

Ասան սուրբ և փրկական Տնօրինականացն սրբութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ այսպէս գտաք ՚ի գործոց ոսկեգրով ՚ի պատմագիր թագաւորութեան ՚ի քաղաքս Վոստանդինուպօլիս, և այսպէս պատմեցաւ :

Յորժամ առին զթագաւորութեան քաղաքն, մեծ թագաւորն Փռանգաց բացեալ զմեծ եկեղեցին զսուրբ Սոփիայ, և մեծ պարսաւանօք կոչէր զամենայն քաղաքն և զսպարիարքն և զնախարարս սուրբ եկեղեցւոյն և խնդրէր զփրկական սրբութիւնս . և նոքա զորունէին ցուցին, և ապա բերին զմեծ գործոց պատմարարն, և էր գրեալ այսպէս :

Պատմութեան աստուածային որ փորանկեալ էր ամենեւին և զարդին նափորտն տրեալ սուրբ առաքելոյն Շիղայ և Տիմոթեայ, և նոցա տարեալ ՚ի

Սեւեւեւայ կղզին և կայ մինչև ցայսօր :
(Օ) պարէզօտն և զպատառակալն և զանկար պատմութեանն ի բարութեամբ թագաւորի Սատթէոս աւետարանչի տարեալ 'ի իրաբիայ Սիաբաց' որ կղզի է և կայ մինչև ցայսօր :

(Օ) քղամիդն կարմիր և զերկու մատն պսակին փշոց առաքեալն Սարկոս տարեալ 'ի Սպանիոյ 'ի Սենետիկ քաղաք :

(Օ) երկնաբեր նափօրտն և զմին բեւեռն և զկաստն որ կոչի աւցան , և զվարչամակն որ ոչ կայր ընդ այլ կտաւան այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն , տարեալ զայն յերկիրն Սաւեաց որ այժմ կոչի Նամէն մեծ մօտ 'ի Ղանէթ և 'ի Տրապիզոն քաղաքն եղին առաքեալքն 'ի բարձր դիտակ լերին , և ամպն և մէգ շուրջ է զնովաւ , յոր ոչ դե կարէ ելանել և մտանել 'ի նայ մինչև ցայսօր :

Իստուածամօր պատմութեանն և ծիրանիսն յԱրմեական կղզոջն կայ :

Խանձարուրն 'ի Նոմ քաղաք կայ , մոգաբեր հանդերձն տղայութե 'ի Սեւեւեւայ կղզոջն յԱտական քաղաքն կայ :

Սուրբ սեղան վերնատանն և զենջակն և այլ սպասքն 'ի Կոստանդինուպօլիս է :

Ձիաւորեալ բեւեռն և սուրբ ձեռացն 'ի նոյն թագաւորութեանն է :

(Օ) արմանաթօռն և պատառ ինկոցն 'ի յԱրական կղզոջն Սորարիա քաղաք կայ :

Նայրական տուեալ զգիրն կենաց անբաց և անընթեռնուլ սրբոյն Պետրոսի տարեալ յԱրական կղզին 'ի յԱրիայ քաղաք զոր սուրբն Բագարատ դարձոյց և զտասն կուռքն խորտակեաց և կայ անդ չորրորդ զինուորութեան գեղարգն որ զկողս փրկական աղբեր արեանն եհեղ , առեալ Սուրենիանոսի որ կոյր էր 'ի ծնէ հարեալ 'ի կողսն փրկչական առ ժամայն լուսաւորեցաւ :

Իստուածարեամբ ներկեալ սուրբ գեղարգն և պսակ փշոցն , Յովսէփ յարեմաթացոյն աջն , և սուրբ շիշ իւղոյն ազնուականին , և աստուածամօր պատկերն սուրբ առաքեալն Թադէոս տարեալք 'ի Նայք :

Իսկ է ալան սուրբ Վեղարդեանն և այսու օրինակաւ ճանաչէք որ ոչ խաբեն զձեզ նենգաժող ազգն : Յունաց որ թագաւորք սուրբք և աստուածասէրք բերեալ զերկնային պսակն սուրբ հաւատացելոյն Քրիստոսի և յամենայն սուրբ եկեղեցիս հռչակապարծանք : Եւ արդ սուրբ գեղարգն Քրիստոսի երկնային գանձն լուսոյ կայ 'ի խաւարի ծածկեալ աշխարհին Նայոց և որք տեսանեն զնա մի տեսցեն զմահ յաւիտեանց , և ոչ իշխեսցէ Եւն մտանել 'ի սահմանն , և որ թագաւորութեան որ կայ իմացեալ , և պատուեալ թագաւորութիւն այնմ աշխարհին սակաւ նուազի 'ի ժամանակս : Եւ նմանութիւն սուրբ աստուածակիր գեղարգին այսպէս է . գմբէթաձև 'ի վերքարշեալ գլուխ նորա որպէս նիզակի սուր առհաւասար և երկնային և հրեշտակաց ձեւեալ նման խաչի փորեալ , և զփորեալ հատուածն յանդրէն երկու կողմանէ յերեսաց սուրբ խաչին բեւեռեալ , և բեւեռամբ չորս որպէս Տէր 'ի վերայ խաչին . և խոր աթոռ խաչին աղիւսանման և ժԲ կողմի յօրինակ առաքելոցն . և վայր կողմն փոր նիզակին չորս մասին չափով , բայց ոչ այլ ինչ քան դակեալ այլ ամենեւին անարատ և հաւասար , այս է նշան գեղարդեանն :

Տիրամօր պատկերն 'ի Նոգոց վանքն , 'ի Թոխկաց գաւառին :

Եւ շիշ իւղոյն յերկիրն Տարօնոյ 'ի վանքն Եղեգնի 'ի ճանաչել արեմաթացոյն աջն 'ի Բաբերանք առ ափն գեղոյն որ առաքելոյն Թադէոսի աւանուամբն է : Եւ պսակ փշոցն յիւր վէմն կայ ուր նահատակեցաւ առաքեալն սբ 'ի Օարեւանդ գաւառի :

Եւ այսպէս օրինակեցաւ տնօրինական սրբութիւնն 'ի հոմ գրէ . 'ի հայ թարգմանեցաւ և բերաւ 'ի Նայս , յորում թիւն ՃՀԶ :

ՈՍԿԻՓՈՐԻԿ